տեւեալ մեծ արձանագրութիւնը կայ (*).

1. Ի թվիս Զ (ՁԱ.) ի հայրապետութեան տն. Կոստանտեայ (?!) արհիեպիսկոպոսութեան Հաւազասպայ աշխարհակալութեան եւ զաւրապետութեան Սարունիին ի թագաւորութեան Դաւթի եւ

2. Ստեփանոս որդի Յոհանա զնեցի զՄոռակերս եւ զիր զեղեան զ

3. այգին որի Շղեր վանի

4. ցս յաւիտեան ի կո. սպիտակ սուլտա

5. նի եւ շինեցի զսա ի հիմանէ սկսեալ

6. ուսով անմահին այ շինել ինձ եւ եղբա

7. ր՝ զ իմոց եւ որդոց արձան կենդանի տեղի

8. զերեզմանի մինչեւ զայ քս եւ առնէ

ողորմութի

9. ինձ եւ իմոցն ի փառ սիւր արդ որք

խախտել ջանան զի

10. մ տրան (?!) յեղեցոյս եւ կամ զտե-

ղիս հանել յազգէ ի

11. ամէ խախտեացին եւ անկցին հա-

ւատոց եւ քրիստոնէութենէ(**)։

Ահա Վարդանի խօսքերի ճշգութեան անհերքելի ապացոյցը. Ումեկի հետ եկողը Յովհաննէսի որդի Ստեփանոսն է եղբայրներով, որ նորա ազգականներն էին։ Ինչպէս Ումեկն էր վանք ու կալուածներ գնել իւր և որդւոց համար, նոյն օրինակին է հետեւում և ազգականը՝ պարոն Յովհաննէսի որդին Ստեփանոսը, գնելով Խոռակերտը իւր գիւղերով, շինելով վանքը հիմքից, որպէս «արձան կենդանի» և «տեղի գերեզմանի» իւր և եղբայրների համար։ Միջնադարեան հայ իշխանական տոհմերի համար անհրաժեշտութիւն էր իրենց հոգեւոր կեդրոնն ու տոհմական գերեզմանատունն ունենալ իբրև վանք. աւելի երկրորդական տոհմերն ու ազատները խմբւում էին իրենց կամ մի այլ իշխանի վանքի շուրջը. այսպէս ԺԳ. դարում Սանահինը ոչ միայն Զաքարեանց, այլ Շոթոռկանց և Դսեղի Մամիկոնեանց մի ճիւղի գերեզմանատունն էր, որ հաստատւում է այնտեղ եղած արձանագրութիւններով։

Ուշադրութեան արժանի է, որ Ստեփանոսը Խոռակերտի և գիւղերի համար վճարում է «կո. սպիտակ սուլտանի», որ ցոյց է տալիս, թէ նա էլ Ումեկի նման իւր հարստութիւնը բերել էր Փ.-Ասիական սելջուկեան պետութեան սահմաններից, որոնց մէջն էին Մանազկերտն ու Կարինը։ Հաւանօրէն Ստեփանոսն էլ վաճառական էր, ինչպէս Ումեկը. Վարդանի, մանաւանդ Գանձակեցու խօսքերը վերաբերում են վաճառականական մի ամբողջ խմբի, որոնց թուին են պատկանում Ումեկից և ազգականներից զատ՝ նաև Սաբաւանի որդիքը՝ «Շնորհաւերն և Մկրտիչն ընչաւէտք և մեծատունք»։

Արձանագրութիւնից պարզւում է նաև, որ Խոռակերտը իւր շրջակայքով, ասել է Սադախլուի գետի վերին հոսանքը, մտնում էր Մահկանաբերդի իշխանութեան և Հաղբատի առաջնորդութեան սահմանների մէջ, մինչդեռ Խոժոռնին իւր շրջապատով, այսինքն նոյն գետի միջին հոսանքը Զաքարեանների սեպհականութիւն էր ըստ Վարդանի և ըստ բանասիրութեան դեռ ևս անյայտ արձանագրութիւնների, որ մի այլ առթիւ պիտի հրատարակենք։

Զ.

Ամենայն հաւանականութեամբ Ումեկի և իւրայինների տեղափոխութեան հետ էր կապուած և մի ուրիշ տոհմի տեղափոխութիւնը. նոքա պէտք է որ ծագմամբ Հայաստանի արևմտեան սահմաններից կամ Սեբաստիայից լինէին, գուցէ և Մանազկերտից՝ Սեբաստիայի հետ վաճառականութեամբ կապուած։ Էջմիածնի N. 364/987 ընտիր գրչութեամբ Հայրապետ քահանայի ձեռքով նկարազարդուած մագաղաթի ձեռագիրը գրուած է 1211 թուին Սեբաստիայում «ընդ հովանեաւ սբ. ածածնին և սբ. Սարգսի զաւրավարին, որ յանուն նոցա կանգնեցաւ սբ. եկեղեցիս ի քաղաքիս Սեբաստիա»։ Նիւթի դրամը հոգացել են «Ցեւանէս պարոն, Ուքան և Պապքան(*)։ ԺԳ. դարու երրորդ քառորդին երևան են գալիս արևելեան Հայաստանում Ուքան և Պապքան անունով երկու եղբայրներ իրենց հարսի հետ մի քանի արձանագրու-

(*) Հրատարակւում է առաջին անգամ։ Ընդգծուած տառերը կցուած են իրար։

(**) Առաջին երկու երկար տողերը գրուած են դրան գլխին, իսկ մնացածը կամարակալ քարի վերայ։ Ընդգծուածները կցուած են։

(*) Մեր Գրչութեան արուեստը, Գ. Քարտէզ հայ հնագրութեան. § 72։